



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11938

891.99

Z-26

Հրատարակող. ԿԱՐՄԻՐ ԳՐՈՇԱԿՐԱՆՈՒԹՅՈՒՆ

~~891.542-19~~
~~Հ-26~~

Պրոֆեսորները բարձր երկրանկի, միայն չեն

ԳՈՒՐԳԷՆ ՀԱՅԿՈՒՆԻ

ԱՐԾԻԻ ԽՆՋՈՅՔԸ

ԲԱՆԻՈՐ-ԳԻՐԴԱՑԻԱԿԱՆ ԱՌԱՎ.

891.99

Հ-26

1991
Ի Ֆ Լ Ի Ս

2003

Հրատարակչ. «ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿ».

Պրովետարները ըստը երկրների, միացե՛ք.

891.89

5-26

այ.

ԳՈՒՐԳԷՆ ՀԱՅԿՈՒՆԻ

ԱՐԾԻԻ

ԽՆՋՈՅՔԸ

ԲԱՆԻՈՐ-ԳԻՒՂԱՑԻԱԿԱՆ ԱՌԱԿ.

1808
36140

1921

Թ Ի Ֆ Լ Ի Ս

2022

3/8 000 ակ.

ԱՐԾԻԻ ԽՆՁՈՅՔԸ

Գեղին-ճահճից դէպ արեւը
Կարմիր-Սարի կատարին,
Ազատների ժողովարան--
Ժայռի ձերպում, արձւի մօտ,
Տարեմուտին, շաբաթ իրկուն,
Լուս կիրակի,

Գեղեցկատես

Մի հանդէս...

Զւարճութիւն, երգ ու պար—
Խնջոյք կար:

Երեք գիշեր, երեք օր,
Գիշեր ու զօր,
Փողերը զիլ փողհարում,
Թմբուկներն են որոտում
Ու կանչում են բոլորին—

21055-60

Մեր աժդահա մեծ սարերի,
Ծառի-թփի,
Մրրիկ, որոտ ու կայծակի,
Գարնան հոօր
 Արշալոյսի
Կարմիր-կրակ շողին
 Սովոր
Ու փրփրուն
Ծովը
Սիրող—
 Թռչունների
Երամներին:

Այս խնջոյքին
Եկել էին,
Որ ասեմ,
Օ անչափ
Թռչուններ...
Հիւրերի չափ
Արիւծը նոյնիսկ
Տեղ չունէր:

Եկել էին ինչ անման—
Ձիւնից ձերմակ,
Սաթից էլ սև,
Վարդից կարմիր,
Թփից կանաչ,
Երկնից կապոյտ,
Ծիածանի
Ամեն գոյնի...
 Էլ սիգածեմ,
 Վեր սաւառնող
 Ու լողացող,
 Ու մի խօսքով—
 Էս աշխարհի
 Ամեն երկրի
 Արտասովոր
Այնպէս հաւքեր,
Որ չէք տեսել ձեր կեանքում:

Այն էլ յիշեմ, որ մենակ,
Արդեօք զխամամբ,
Թէ մոռացմամբ,
Ձէին կանչել սագերին:

Վա՛յ սագերի սև օրին...

Այդ օր տխուր, միայնակ,

Ազատներից

Ու արձւից

Անարգւած,

Նստել էին ժողովի.

Վիճում էին

Ձեզ պէս տաք-տաք ու յուզւած,

Որ արձւի մօտ երկու սագ

Ուղարկեն շուտ՝ պատւիրակ

Ու պարզւի—

Թէ ինչո՞ւ այս մեծ տօնին

Մոռացել են սագերին...

Եւ պատւիրակ

Երկու սագ

Լուս առաւօտ

Կիրակի

Ճամփա ընկան:

Կամաց-կամաց,

Երեքշաբթի

Մութ իրիկւան,

Շատ ուշացած՝

Եկան հասան

Արձւի մօտ:

Շուք ու փայլը հանդէսի,

Նորածառակ արդն ու զարդ

Եւ ամենքին գոհ, զւարթ—

Մեր սագերը որ տեսան...

Տխուր-տրտում,

Դարդը սրտում,

Առաջ եկան,

Պատիւ տւին

Ազատներին

Ու արձւին

Եւ ասին.

Բարև՛, արձիւ.

Հոգսերդ շատ, անպակաս...

Ուրախ սրտով

Ապրիս յաւերժ,

Թէ որ անվերջ

Մեր ցաւերն էլ դու հոգաս...

Հեռո՛ւ անշուք այս ծերպում

Բո թմբուկն է որոտում.

-- Բայց դու, անա,
Օ՛ր, խնդրում ենք,—
Մի գայրանա,

Թէ անհամեստ քո դէմ խօսենք
Ակամայից.

Քո հիւրերից
Ամենից շատ յարգի ենք մենք.
Որովհետեւ, ինչպէս զիտես,
Ազնւական ծագում ունենք.

Մեր պապերը մութ զիշերին
Հոօմն առան,

Մեր պապերին

Նոյնիակ կայսրի պալատ տարան...

— Իսկ անժամ... ամսոս...

Հազար ամսոս,
Որ ակներով ոսկէ թագիդ
Պակասում է մի յակինթ...

Հազար ամսոս—
Հիւրերդ շատ, տեսակ-տեսակ,
Հիւրերիդ մէջ չկայ մի Սագ.

— Եւ դու, արծիւ,
Թէ խորհէիր
Ու Սագերին
Որ կանչէիր
Քո խնջոյքին—

— Օ՛ր, գիտես թէ
Սագերն այնժամ ինչ կ'անէին.—

Արծի համար
Սագերը վառ
Փունջ կ'լինէին.

Երկնուց աստղեր կիջեցնէին,
Որ հիւսէին

Թագ ու պսակ ազամանդէ.
Ու կարգէին քեզ թագաւոր,
Որ ապրէիր դու բախտաւոր.
Կը կազմէին

Եւ մի հանդէս չնաշխարհիկ,
Որ ապրէին բոլոր մարդիկ.
Կը կանչէին կայսրին—

Անշուշտ,

Որ թոշուններդ ուտէին կուշտ...

— Եւ դու, հիմա

Մի բարկանա...

Ասն դու մեզ
Հանգիստ ու հեզ.—

Ինչո՞ւ խորշել
Աստճու տւած հանգիստ կեանքից.
Ինչո՞ւ, ինչո՞ւ
Փախչել հեռու
Բարի կայսրից...
Ու մարդկանցից...
Ու միշտ հպարտ...
Ու միշտ աղքատ...
Տանջուել ի դուր.

— Լսիր, Արծիւ.
Հօ գիտես որ
Սագերը միշտ
Մինչև այսօր,
Մարդկանց շնորհիւ,
Ապրում են կուշտ,
Խաղաղ-անդորր,
Զարթ, անհոգ ու անվիրտ:

— Ձենք ուրանում,
Ի հարկէ,
Որ ժամանակ,
Առժամանակ,
Զափազանց գէր
Ու շատակեր
Որևէ Սագ—
Մարդու ձեռքով
Պէտք է մորթւի
Ճաշկերոյթի
Ժամանակ:

— Ի՞նչ անենք որ,
Օրից մի օր,
Մեր աշխարհի
Օրէնքով,
Այդպէս չնչին
Ու անարժէք
Հարկ պիտի տանք
Մարդ-Արարչին...

— Հենց լաւ է որ,
Ամենայն օր,
Դժուք էք ասում.
Թէ ամեն փորձ
Ու վսեմ գործ—
„Ձոն է ուզում“...

— Թող որ այսօր
Թռչուն-գազան, մարդ ու արքան
Սագ ու արծիւ
Մի ուխտ անեն եղբայրական,
Մտեր ու հօր,
Ամենազօր...
Որ ծայրէ ծայր
Արար աշխարհ,
Երկին ու ծով,
Նախանձով,
Ողջունի քեզ,
Ողջունի մեզ:

Ազատների,
Երամներով
Անցաւ շուկ,
Զսպաս ծիծաղ...
Նրանք այդ օր —
Աւելի քան
Յաղթ ու հօր,
Խեղճ սագերին
Դառն ժպտով
Ու անվրդով
Ժպտացին:

Լսեց և լուռ արժիւն հանդարտ,
Թռչունը սէգ,
Լսեց հանդարտ,
Ասեց հպարտ՝
Սագերին սէգ.

— Չաղլիկ ու գէր
Մտնտ սագեր.
Երդուում եմ ես
Ազատների ազատ սերունդ—
Թռչունների
Երամ-խմբով,
Ազատների
Ազատ կամքով,
Արևասէր
Ու փրփրուն
Հողու թափով—
Խղճում եմ ձեզ:

— Լսել եմ ես,
Որ անամոթ,
Որ թոյլերի
Կաշին քերթող,
Արին խմող
Այդ մարդկանց մօտ,
Ճաշկերոյթին—
Գառան մսի
Եւ գինու հետ—
Դուք մեծ յարգանք
Պատիւ ունէք...

Ցարգանք է այն,
Թէ անարգանք,
Լսէք միայն.

— Ասում էք, որ չունէք հոգանք.
Ասում եմ, որ չունէք և սէր,
Ազատ կեանքի
Եւ բարձունքի.
Չունէք մեզ պէս
Հզօր թևեր,
Որ դուք նոյնպէս
Սլանաք վեր:
Չունէք մեզ պէս
Սարի սովոր
Աչեր կրակ,
Աչեր կարուկ.
Ապրէք այդպէս
Ցարին բոլոր
Ցած ու անարգ,
Կոյր ու սարուկ...

— Ասում էք, որ
Ապրում էք կմուշտ, զւանթ էք դուք.
Ասում եմ, որ
Ապրում էք դուք
Ծնւած օրից
Թոյլ ու անկամ,
Վզերդ ծուռ,
Հացի կարօտ.

— Լաւ է՝ չապրէք,
Լաւ է՝ մեռէք,
Քան թէ նորից,
Ամին անգամ,
Այնպէս անդուր
Կեղտ ու մրոտ
Հաց աղերսէք...

— Ասում էք, որ
Ապրում էք դուք կոշտ ու զւարթ.
Ասում եմ, որ
Թափւում է ձեր արիւնը վարդ.
Վարդից կարմիր,
Վարդից զւարթ
Ձեր կեանքի զարդ
Կեանքի կարմիր
Արիւնը վարդ...

— Ասում էք, որ չունիք դուք վիշտ.
Ասում եմ, որ մորթւում էք միշտ—
Ճաշի համար
Համեղ պատառ,
Չաղլիկ ու գէր
Մսոտ սագեր...

— Երդում եմ ես.
Թռչունների
Աչքերը վառ,
Ճանկերը սուր,
Կտուցն երկաթ,
Թևերն պողպատ,
Հոգին հպարտ,
Երգը անուշ,
Սէրը քնքուշ,
Կամքը անյաղթ,—
Լինին վկայ,
Որ ձեզ համար,
Ազատների
Բարձունքներում
Օ՛, տեղ չկայ:

— Չաղլիկ ու գէր
Մսոտ սագեր...

Գնացէք տուն.
Սովորեցէք կարապի պէս լողալ ծովում,
Կռունկի պէս երամ-երամ սուրալ օդում,
Ու դայլայլէք սոխակի պէս ալ-վարդերին.
Կաքաւի պէս հողի վրայ
Վազէք անահ...

—Ազրէջ ազնտ—
Մեր մրրկուն,
Մեր խենթ հոգուն
Հարազատ...

Արծիւը լոկց:

Դատարկ ձեռով
Սաղերը երբ „Հոսմ“ անցան...
Համեմներով
„Կայսրի“ համար... տապալկեցան:

1931 թ. 12 մարտի
Մոսկւա.

11938

2013